

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՁԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 75

Պ. Ն Ե Զ Վ. Ա Ն Օ Վ.

ՄԱԿԱՐԴԻ ՀԱԿԻԿԵԼ

Մանկական վեպիկ

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ:



891.710.
U-47

ԹԻՖԼԻՍ

Տիպ. Հրազդակ. Առաջ. Վահագ. Վահագ. Վահագ.

1894

30 MAY 20

Ընկերութեան հետեւեալ հրատարակութիւնները վաճառվում են ընկերութեան գրասեսնեկում և Կենդրոնական գրավաժճառանոցում.

1	Թաւամազ մեղու,	թարգ.	օր.	Ն.	Տէր-
	Մարկոսեան			— 40
2	Կարմիր լապտեր,	թարգ.	օր.	Ն.	Տէր.
	Մարկոսեան			— 50
	Նոյնը առանց կազմի			— 30
3	Մանկական երգեր, Գամառ-Քաթիպա				— 15
4	Թովմաս եղբօր տնակը, թարգ., օր. Ն.				
	Տէր-Մարկոսեան			— 45
	Նոյնը կազմած			— 60
5	Մորեխ և նրա ջնջելու հնարները, Հ.				
	Տէր-Բարսեղեանի			— 10
6	Նեղ և խոնաւ բնակարանների մասին, Հ.				
	Առաքելեանի			— 10
7	Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց —				80
8	Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսութեան, Մօրիս Բլօքի, փոխադր. Ս. Պալասանեանցի .				— 50
9	Գամառ-Քաթիպայի բանաստ. կազմ.				— 1 20
	Նոյնը առանց կազմի			— 50
10	Ռոբինզոնի պատմութիւն, թարգմանութիւն Գիւտ քնն. Աղանեանցի .				— 60
11	Ուշտաւորք, գործ Վիլհէլմ Հառոֆի .				— 75
12	Գառնուկ և լուսատիկ, վէտեր Քրիստափոր Շմիդտի, թարգ. Նուարդ .				— 25
13	Սայեաթ-Նօվա, ազգային երգիչ .				— 5
14	Ծննդեան պատմութիւնը և Մայիս սեան տօնը Ֆինլանդիայում .				— 10
15	Ազգաթանգեղեայ պատմութիւն .				— 1 —
16	Գիւղական Խալիֆայ. Ա. Արարատ .				— 50
17	Վանայ Սազ. Գ. Եէրենցի .				— 75
18	Փնջիկ. գրեց Աղեքս. Արարատեան .				— 20

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐՈՒԿԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

891.71 Ա.3

Հ-47

№ 75

Վ. Ն Ե Զ Վ Ա Ն Օ Վ

ՄԱԿԱԿԱՀԱՅ ՀԱԿԻԿԵ

Մանկական գիտելիք

1002

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ:



ԹԻՖԼԻՍ

Տպար. Վ. Բայց. Հրատ. Ընկ. | Տպ. Գրադ. Իզդ. Տ-վա.

1894

JUL 2013
5542

5542



ՄՈՒԿՈՒԶԻ ՀԱԻԻԿԸ

Ամառուայ սկզբին՝ մէկ օր կալուածատիրոջ բակը մտաւ մի գիւղացի կին և սկսեց լուսամուտից ներս նայել։ Նա ձեռքին մի կողով ունէր։

—Ի՞նչ ես ծախում, —հարցրեց նրան կալուածատիրոջ կինը։

—Վառիկներ են, տիկին, գնեցէք։

Երեխաներն այս բանը լսելով մօր չորս կողմը հաւաքուեցին։

—Մայրիկջան, ի՞նչ կ'լինի որ գնես վառիկները. դու քոնի՛ ժամանակ է խոստանում ես, —և մօր փեշերից բռնելով՝ նրան պատշգամք դուրս բերեցին։

Ծառաների սենեակից դուրս վազեց և կառապանի որդի Մուկուզը։ Նա իսկոյն և եթիմացաւ, որ երեխաները մի ինչոր չետաքրքիր բան են գտել և ուրախ-ուրախ վազ տուեց բակի միջով գէպի պատշգամքը։ Բայց դեռ կէս

Дозволено цензурою. Тифлисъ, 2-го Мая 1894 г.

Ճանապարհին նա՝ կարծես մի բան մտաբերելով՝
կանգ առաւ։ «Այս խօ նրանց համար են բան
առնում», գուշակեց նա, և հեռուից սկսեց դի-
տել թէ այս ինչ բան պիտի լինի գիւղացի կողջ
ձեռքին... «Այս խօ հաւիկ է... կենդանի», քիչ
մնաց որ գոռար Մուկուչը և յանկարծակի կարմ-
րեց, այնպէս որ աչքերին մինչեւ անգամ ար-
ցունքներ փայլեցին։ Հաւիկ։ Բայց քանի
ժամանակ է, որ Մուկուչն ուզում է իր սեփա-
կան հաւիկն ունենալ, որին նա կարողանար
ինքն իր ձեռքով կերակրել, որը Մուկուչին ճա-
նաչէր ու սիրէր և որը ապագայում ձագեր էլ
ունենար... և այդ բոլոր ձագերն էլ Մուկուչինը
լինէին։ Բայց որպէս զի նրա վրդովմունքը չը-
տեմնէին, Մուկուչն իրանց խրճիթը փազ տուեց
և լուսամուտից սկսեց հետևել թէ ինչ են ա-
նում բակում։ Վառիկներն այդ ժամանակ սաս-
տիկ ճշճում էին և իրար վրայ բարձրանա-
տիկ գլխները դուրս էին հանում գղղղուած փա-
լասի ծակերի միջից։ Այդ փալասով ծածկուած
էր կողովը։

Երեխաները չէին կարողանում համբերել
մինչեւ վառիկները նրանց ձեռքը կ'տային։ Ան-
համբեր էր մանաւանդ երեք տարեկան Ստե-
փանիկը։ Նա արդէն ձեռքը մի քանի անգամ

կողովն էր կոխել, որ փալասը իբր թէ պատահ-
մամբ յետ քաշի, բայց միշտ չէր յաջողւում։
Վերջապէս՝ երբ կինը մօր հետ առուտուրը վեր-
ջացրեց, դարձաւ դէպի երեխաներն ու ասաց
նրանց։

— Դէ՞չ, փոքրիկ պարոններ, չիմա վառիկ-
ները ձերն են. վերցրէք ու խաղացէք նրանց
հետ։

Մէկ էլ տեսնես՝ Ստեփանիկն ուրախութիւ-
նից այնպէս քաշեց փալասը, որ կողովն էլ հետը
շուռ տուեց։ Վառիկները ճշճուալով բակը թափ-
ուեցան։ Գիւղացի կինը հազիւ կարողացաւ փա-
կել բակի գոնսերը, որ վառիկները փողոց չ'վա-
զէին։ Իսկ բակի և պարտիզի միջով երեխա-
ներն արդէն նրանց ետևիցն էին ընկել։ Մինչև
անգամ Մուկուչն իրյուզմունքը մոռանալով՝ դուրս
փազեց խրճիթը ու ընկաւ վառիկների ետևը։
Իզուր էր աշխատում տիկինը նրանց կանգնե-
ցնել։ Երեխաները վազգզում էին բակի միջով և,
ոչոքին չլսելով, գոռում էին ու ձեռքերը թա-
փէթափ տալիս։

Իսկ վառիկներն աչից աւելի ու աւելի խըրտ-
նում էին—մէկ տեսար՝ անչետանում էին պա-
տահած մի որևէ ձեղքի միջում, մէկ տեսար՝
օղն էին բարձրանում ու երեխանց գլխի վրայից

Թռչում: Բայց երբ աղախինը, խոհարարուհին ու լուացարարը օգնութեան հասան՝ գործն աւելի աջող կերպով սկսեց գնալ: Վառիկներից մէկին ամբարը ներս զցեցին ու այնտեղ բռնեցին. միւսը հենց իր ոտով թալակն ընկաւդատարկ տակառը մտաւ, մէկին էլ հենց թրուշելու ժամանակ աղախինը ոտից բռնեց ու թէպէտ փոքր ինչ ջարդուած, բայց էլի տիրոջ յանձնեց: Եւ երբ փոքր ինչ յետոյ մայրը նորից պատշգամք դուրս եկաւ, բոլոր չորս երեխաներն արդէն հանգիստ նստած էին սանդուխտների վրայ: Նրանցից ամեն մէկը բռնած ունէր մի կողով կամ թղթէ արկղ, որի մէջ նստացրած ունէր իր վառիկը: Նրանք սպասում էին մինչև Մուկուչը հաւաքունը կ'չինէր:

— Բոլորին բռնեցիք, — հարցրեց մայրիկը:

— Բոլորին. — պատասխանեցին երեխաները, և նրանցից ամեն մէկը սկսեց ցոյց տալ իր վառիկը:

— Բայց այստեղ չորս հատ է, — ասաց մայրը, — իսկ ես հինգը գնեցի: Ո՞ւր է մէկը:

Երեխաները զարմացած իրար նայեցին, իսկ Մուկուչն արդէն ոտքի վրայ թռաւ, որ հինգերորդի ետևից ընկնի:

— Պէտք է վնասուել, — ասաց մայրիկը: — Ո՞վ

գիտէ, խեղճը որտեղ է խրուել, կամ գուցէ ջրհորն է ընկել... վազ տուէք շուտով: Եւ լսեցէք, աւելացրեց նա. — ով որ այդ վառիկին գտնի, նրան կրնծայեմ այդ վառիկը:

— Իսկ եթէ Մուկուչը գտնի, — հարցրին երեխաները:

— Մուկուչին կրնծայեմ, — պատասխանեց մայրիկը:

Մի րոպէից յետոյ Մուկուչը սաստիկ յուզուած իրանց խրճիթը ներս վագեց:

— Հը, ի՞նչ է պատահել. — հարցրեց նրա մայրը, Մարիամը: Մուկուչը պատմեց ինչոր խոստացել էր տիկինն ու սկսեց հանել կօշիկները:

— Ինչո՞ւ ես կօշիկներդ հանում:

— Այսպէս աւելի յարմար կ'լինի հաւիկին բռնել, — պատասխանեց նա և կօշիկներն անկիւնը շպրտեց:

— Դեռ կաց, մի բան կեր, — ասաց մայրը. — բայց նա դեռ իր խօսքը չէր վերջացրել, երբ Մուկուչը արդէն անհետացել էր և չէր լսում...

Ճաշի ժամանակ տիկինը հարցրեց երեխանց:

— Վառիկը գտապք:

— Զէ, չ'գտանք:

— Իսկ Մուկուչը:

— Մուկուչը դեռ վնասում է: Նա, գիտես,

մայրիկ, ցանկապատից վեր բարձրացաւ ու դէ-
սի բանջարանոցները վազեց:

Երբ արդէն արեւը մայր էր մտնում, Մա-
րիամն էլ սկսեց անհանգիստ լինել:

—Այս ժւր է կորել Մուկուչը, —մտածում
էր նա՝ դիտելով բակն ու ցանկապատի ետեփ
դաշտը: Բայց Մուկուչը ոչ մի տեղ չկար: Մա-
րիամն սկսեց դէս ու դէն ընկնել. վազում էր
բանջարանոցները, գիւղը, «Մուկուչ, Մուկուչ»
էր կանչում, հարցնում էր հանդիպողներին, բայց
Մուկուչի մասին ոչինչ չիմացաւ: Տիկինն ար-
դէն մարդիկ էր պատրաստել, որ Մուկուչի ե-
տեխն ուղարկի, երբ Մուկուչն երեւեցաւ գեղի
երեխանցով շրջապատուած: Նա գալիս էր կար-
ծես յաղթանակով և գդակում պահած ուներ
կորած վառիկը, որին կապկապել էր իր գօտիով:

Բայց նրա դէմքը լուրջ էր և անհանգիստ:

—Դէ, կորէք զլխիցս, —ասում էր նա կա-
լուածատիրոջ ծառաներին, որոնք նրան տեսնե-
լուն պէս սկսեցին ծաղրել: Յետոյ նա բաժա-
նուելով իր գիւղացի ընկերներից՝ վազ տուեց
դէպի կալուածատիրոջ բնակարանը: Երբ Մու-
կուչի մայրն իմացաւ իր որդու գալուստը՝ վա-
զեց նրա ետեխից: Բայց նա արդէն դուրս էր գալիս
տիկնոջ մօտից:

—Լաւ գիտենաս, մայրիկ, հաւիկը հիմա մերն
է, —ասաց նա Մարիամին, և երկուսը միասին
բակի միջով իրանց խրճիթը վազեցին:

Հաւիկը յոզնածութիւնից ուժասպառ էր
եղած և փոքր ինչ էլ ջարդուած էր. նա դժուար
էր շնչում և ոտի վրայ չէր կարողանում կան-
գնել:

Մուկուչն ու Մարիամը սկսեցին այս անել,
այն անել, որ նրան բժշկեն, բայց ոչինչ չէր
օգնում:

—Մի՞թէ հաւիկս պիտի մեռնի, —հառաչում
էր Մուկուչը քնելով:

Բ.

Առաւօտը Մուկուչը զարթեց թէ չէ —ինչ
է տեսնում — իր հաւիկն արդէն զբօնում է
խրճիթում, ճանկերով թխկիթը լսկացնում է յա-
տակն ու փշրանքներ հաւաքում:

—Ա՛ն, հաւիկջան, կենդանացար, —գոռաց
նա ուրախութիւնից և անկողնից վեր թռաւ:
Բայց երեկուայ բանը մտաբերելով՝ էլ չուզեց
ետեխն ընկնել, այլ չեռուից սկսեց իրան մօտ
կանչել և ուտացրեց նրան երեկուայ բլղուրէ
փլաւի մնացորդը: Փոքր ինչ յետոյ նա տեսաւ,

որ կալուածատիրոջ երեխաներն իրանց վառիկ-ներին բակն են դուրս բերել ու ինքն էլ զգու-շութիւնով իր հաւիկին սկսեց այն կողմ քշել: Վառիկներն իրար հանգիստ կերպով ընդունեցին, իբր թէ ոչինչ չեր պատահել բայց երե-խաները յարձակուեցան Մուկուչի վրայ ու սկսեցին անհանգիստ կերպով հարցուփորձ անել, թէ ուր էր նա կորել:

Բանից դուրս եկաւ, որ Մուկուչի հաւիկն երեկ բանջարանոցումն է եղել ու իրան համար արխային՝ գետինն է եղել քչփորում ու ճիճու-ներ փնտուում:

Բայց Մուկուչը վրան յարձակուել է այնպէս անզգոյշ կերպով, որ բոնելու տեղ՝ վախեցրել ու խրանեցրել է նրան: Վառիկը վազելով բան-ջարանոցից դաշտն է մտել, Մուկուչը՝ նրա ետևից: Դաշտում մի ճահիճ կայ, մէջը քիչ ջուր է, բայց տիղմ ու ցեխ՝ խիստ շատ: Վառիկն այդ կողմն է վազում, ոտը գնում է գետնին թէ չէ խրում է ցեխում ու չի կարողանում դուրս գալ: Թթվացնում է իր թեւերը, բայց ոտները տղմից չի կարողանում չանել: Առանց երկար մտածելու՝ Մուկուչը՝ նրա ետևից ցատկում է և երբ վառիկը ձեռքն է առնում, տեսնում է, որ ինքն էլ է խրուել տղմի մէջ: Հայ դէս, հայ

դէս—վերջապէս դուրս է գալիս ճահճից, բայց բոլորովին թրջուած ու ցեխոտուած: Վառիկին ամուր բոնել է, բայց ուր գնայ՝ չ'զիտէ: Տուն գնալ այդպէս թրջուած ու կեղտոտուած՝ ամա-չում է: Նրա բաղդից՝ գիւղացի երեխերը են մօտով անցնում գետի ափին խաղալու: Նրանք Մուկուչին խորհուրդ են տալիս վառիկին գօտ-կով կապել որ չ'փախչի, իսկ իրան՝ գետը գնալ, հանուել ու շաղիկն ու վարտիկը լուանալ: Ահա սրա համար էր Մուկուչն այդքան ուշացել:

Հիմա հարց ծագեց թէ որտեղ պահեն վա-ռիկներին, որ նրանք միանգամից իրանց տեղը գիտենան: Վճռեցին պարտիզի հովանոցը հա-ւարուն շինել: Սյդ տեղը գոնէ ծառաներից ու շներից հեռու է: Սյդ կողմը ոչոք էլ չի ման-գալիս, ուրեմն վառիկները ոչոքին չեն խանգա-րիլ, իսկ հովանոցի դուռն էլ այնքան ամուր է գոնէ, որ զիշերները կարելի է փակել: Հարցը մայրիկին—նա թոյլ տուեց: Իսկոյն սկսեցին հովանոցում թառ շինել: Նոյն օրը, երեկոյեան, վառիկներն իրար կողքին նստած՝ քնած էին նոր թառի վրայ: Հետեւեալ օրուանից սկսած ամենայն առաւօտ, հէնց արեւածագին, Մու-կուչը հովանոցն էր վազում վառիկներին այցե-լելու ու հովանոցից դուրս թողնելու: Երբոր

փոքր ինչ ետոյ երեխաներն էլ էին գալիս, նրանք
միասին սկսում էին վառիկներին կերակրել:
Վառիկները սովորեցին իրանց տէրերին, էլ չէին
վախենում նրանցից և համարձակ կերպով նրանց
ծնկներն ու ձեռքերն էին ցատկում: Իսկ երեխա-
ները հէնց էն է, որ ուտեցնում էին նրանց:
Ամենահամեղ բաները, որ տալիս էր նրանց
մայրը ճաշի կամ թէյի ժամանակ, նրանք պա-
հում էին վառիկների համար: Մէկ անգամ Օսա-
նիկն իր հաւիկին մինչև անգամ սառը շաքար
բերեց: Հաւիկն ազահութեամբ վրայ ընկաւ, բայց
կուլ տալիս սկսեց խեղդուել. պառկել է ու չի
շնչում: Այդ օրը շատ արտասուր թափուեցաւ,
բայց վերջը, փառք Աստծու, առողջացրին:

Գ.

Այսպէս օրերն անցնում էին, իսկ հաւիկներն
տւելի ու աւելի մեծանում ու սիրունանում էին:
Ո՞վ կարող էր ենթադրել, որ մի այնպիսի փոր-
ձանք կ'պատահի, որ ամեն բան իրար չետ կը-
խառնի: Բայց փորձանքն եկաւ չսպասած տե-
ղից:

Մէկ օր երեխաները պարտէզ դուրս վազե-
ցին, կանչեցին վառիկներին, բայց նրանք առա-

ջուայ պէս նրանց առաջ չ'վազեցին: Մօտեցան
նրանք հովանոցին—դռները բաց է. ներս վա-
զեցին—ի՞նչ են տեսնում—Մուկուչը փոռուած
է գետնին, երեսը խրել է գդակի մէջ ու լաց
է լինում:

—Մուկուչ, ի՞նչ է պատահել,—հարցնում
են նրան, իսկ Մուկուչը վեր է թռչում, ցոյց է
տալիս անկիւնն ու ասում:

Ահա ձեր հաւիկները, թէ ուզում էք՝ վեր-
ցրէք, իսկ իմ Զալիկը մինչև անգամ բոլորու-
ին չկայ:

Եւ իրաւ՝ անկիւնում ընկած էին չորս հա-
վիկներն անշարժ ու արնում շաղախուած, իսկ
հինգերորդը չկար: Երեխաները շուարեցան.
առանց մի խօսք ասելու՝ նրանք նայում էին
սարափած և միայն արիւնից յետ ու յետ էին
քաշում:

—Դու, Մուկուչ, հանգստացիր,—ասաց վեր-
ջապէս Օսանիկը՝ արցունքները կուլ տալով:—
Ո՞վ զիտէ, կարելի է քո Զալիկը փախել է ու
կրկին կ'զանես նրան:

—Հա, ի՞նչպէս չէ—փախել է... Այ, տե-
սէք, միայն փետուրներն են մնացել.—պատաս-
խանեց Մուկուչն ու գդակից հանեց իր Զալիկը
միայն յիշեցնող երեք զզզզուած փետուր, որ

գտել էր նա յատակի վրայ։ Սակայն Օսմանիկը դեռ յոյսը չէր կորցրել։ Նա վճռեց, որ շուտով հարկաւոր է ամեն բան հայրիկին պատմել և կանչել տալ Օսէփ-պապուն։ Օսէփ-պապին անպատճառ կ'զիտենայ թէ ինչ պէտք է անել։ Մօր մօտ Օսմանիկն ինքը գնաց, իսկ Օսէփ-պապու ետևից Մուկուչին ուղարկեց։ Շուտով ամենքն իմացան թէ երեխանների գլխին ինչ փորձանք է եկել։ Հովանոցի մօտ մարդիկ հաւաքուեցան, որոնցից ամեն մէկն իրանն էր ասում թէ «ոչ թէ այդպէս, այլ այսպէս պէտք է հաւերին պահն»։ Բայց ով հանեց վառիկների գլխին այդպիսի մի օյին—ոչոք չ'գիտէր։ Մէկն ասում էր՝ «կատուն է», միւսը թէ «աքիմն է», երրորդը թէ «դաշտի մուկը»։ Խօսում էին և աղուէսի մասին, բայց հաստատապէս ոչոք բան չասաց։ Եկաւ և Օսէփ-պապին։ Օսէփ-պապին հանգուցեալ ծեր կալուածատիրոջ ժամանակ որսորդ էր, յետոյ հովիր դարձաւ, իսկ վերջը նրա ծերութեան պատճառով նրան պատուերեցին հոկել մեղուների փեթակներին։ Այսպիսով նա ամբողջ կեանքն անտառումն էր անցկացրել, և այս պատճառով էլ ամենքն ասում էին, որ նա Ճանաչում է ամեն մի գաղան, ամեն մի թոշուն, ամեն մի խոտ։ Երբ նա մօ-

տեցաւ, ամենքը յանկարծակի լուեցին և հետաքրքրութեամբ «պապուն» հովանոցը ներս թողին։ Նրա ետևից մտաւ և Մուկուչը և անհամբերութիւնով սպասում էր թէ ինչ կասի պապին։ Բայց պապին չէր շտապում։ Նա վառիկներին ուշադրութիւնով ամեն կողմից տնտղեց և երկար ժամանակ բան չէր ասում։

— Արիմն է արել։ — Ասաց նա վերջապէս առանց ոչորին նայելու։

— Այդ փուչը թուչուններին միայն խեղդել զիտէ, իսկ օրինաւոր ուտել՝ որ ասես... Ահա այդպէս բուգը կ'կրծի, արիւնը կ'ծծի ու կ'թողնի։ Ու կարծես թէ արիւնից հարբած՝ կ'սկսի յետոյ ամենքի վրայ յարձակուել ու բոլորին էլ խեղդուել, թէկուզ կուշակ էլ լինի։ Շատ անգամ տասը հաւը իրար ետևից կ'խեղդի, իսկ ինքն ինչ է—փուչը կատուիցն էլ փորը է։ Աղուէս այդպէս չէ։ Նա աշխատում է թուչունին կենդանի բռնել, որ տանի իր ձագերին տայ խաղալու, միայն թևերն է կրծոտում, որ չ'թոչի։ Իսկ հիմա, որովհետեւ բոլոր վառիկներն այստեղ են, ու նրանց արիւնն էլ ծծուած է—ուրեմն այս աղուէսի բանը չէ։

— Ի՞նչպէս թէ բոլորն այստեղ են, պապի, — Ընդհատեց նրան Մուկուչը։ Ախր, չէ որ իմ հա-

Վիկը հետն է տարել։ Հինգն էին, իսկ հիմա, տեսնում ես, չորսն են։

— Հինգն էին։ Առաջ ինչու չեիր ասում։ Ես կարծում էի բոլորն այստեղ են...

Պապին սկսեց նորից զննել։ Այս անգամ աւելի երկար էր զննում, նա՝ ծննկների վրայ ընկած՝ չողէչող ման էր գալիս, քրքրում ամեն մի անկիւն, շօշափում էր ամեն մի ծակուծուկ, տնտղում էր արթիւնի ամեն մի կաթիլը ու շարունակ մի ինչոր բան էր փնթփլնթում այնալիս, որ ոչոք չեր լսում։ Վերջապէս, երբոր նա ամեն բան զննեց, վեր կացաւ ու վճռողապէս ասաց.

— Գողը երկումն է եղել։

— Ի՞նչպէս, — բացականչեցին շատերը։

— Այնպէս։

Ու պապին մանրամասնաբար պատմեց ինչոր պատահել էր նախընթաց գիշերը։ Այս թէ նրա ասելով բանն ինչպէս է եղել։ Աքիսը հովանոցի մի անկիւնում մի մեծ ձեղք է գտել ու գիշերով վառիկների մօտ մտել։ Հաւիկները նստած էին բարձր, թառի վրայ, և, որպէսզի նրանց հանի, աքիսը պատի վրայով մագլցել է վեր։ Պաստառի վրայ դեռ նրա ճանկերի տեղերը կան։ Հասել է թառին թէ չէ, ցատկել է

նրա վրան ու նրա հետ միտախն վայր է ընկել գետին։ Հովանոցում ընկնում է իրարանցում։ Աքիսը քէֆ է անում։

Յանկարծ՝ քէֆի ամենաթունդ ժամանակ, երբ շատ կարելի է Մուկուչի Զալիկը դեռ կենդանի էր, հովանոցում երևեցաւ նոր անսպասելի հիւր։ Արդեօք աղուէս էր նա, թէ մի այլ գաղան—հաստատ ասել չի կարելի, բայց երեւում է, որ նա աքիսից աւելի մեծ և ուժեղ գաղան էր։ Չնայելով այս բանին՝ աքիսն սկսեց իր որար պաշտպանել։ Բայց այս անգամ քաջութիւնը նրան չօգնեց։ Նա յաղթուեց և կըծոտուած ու խոցոտուած՝ արնաքամ լինելով՝ նա երեխ հէնց այն ձեղքի միջով դուրս սողաց, որից որ մտել էր։ Գոնէ նրա արիւնի հետքերը մինչեւ այդ ձեղքն էին տանում։ Իսկ յաղթողը առանց երկար մտածելու՝ բռնեց Զալիկին ու իր հետ տարաւ։ Մուկուչը բոլորովին յուզուել էր այս բաները լսելուց յետոյ։

— Ուրեմն էլ ոչինչ հարկաւոր չէ անել։ — Հարցրեց նա սաստիկ յուզմունքից շնչասպառ լինելով։

— Ի՞նչպէս թէ ոչինչ։ Հիմա այդ փուչերին պէտք է բռնել ու պատժել, որ ուրիշներին խրատ լինի։ Հապա։



Եւ իրաւ՝ Մուկուչը մի այնպիսի ատելութիւն զգաց դէպի իր Չալիկի թշնամիները, որ նրանց առանց խղճալու կ'նահատակէր, եթէ ձեռքն ընկնէին:

Դ.

Պապին առհասարակ շատ էր սիրում որս անել: Այդ օրը նա կարծես նորից երիտասարդացաւ, երբ սկսեց ջաջէլ ժամանակուայ պէս հետամուտ լինել զազաններին և նրանց դէմ թակարդներ լարել: Մուկուչն օգնում էր նրան, իսկ երեխանները շարունակ նրանց ետևիցն էին վազում ու զանազան հարցեր առաջարկում: թէ «այս ի՞նչ է», «իսկ այս բանն ինչո՞ւ ես այսպէս անում»... Եւ պապին շարունակ նրանց պատասխանում էր ու բացատրում: Առհասարակ այդ օրն երեխանները շատ բան լսեցին զազանների ու որսի մասին: Երեկոյեան հովանոցում ամեն բան կարգի բերին. սատակած վառիկները տարան, թառն առաջուան տեղն ամրացրին ու վրան երկու մեծ հաւ նստացրին: Այն ձեղքը, որի միջով անցել էր աքիսը, աւելի մեծացրին ու նրա առաջ պապին այնպիսի մի բան սարքեց, որ բոլոր երեխաններին զարմացրեց: Իսկա-

պէս դա մի հասարակ բան էր. ձեղքի վերև կախած էր նետ ու աղեղի նման մի բան, որի լարն արդէն ձգուած էր, իսկ նետի ծայրը ցած էր նայում: Եթէ մէկն ուզենար ձեղքից ներս մտնել ու դիպչէր թոկին, որը միացած էր աղեղի լարի հետ, իսկոյն նետը ցած կ'թռչէր ու կը մխուէր ձեղքից ներս մտնողի մէջ: Որպէսզի երեխանները լաւ տեսնեն, թէ ինչպէս է գործում իր թակարդը, պապին ասաց նրանց որ հովանոցում մնան, իսկ ինքը դուրս գնաց և դրսից ուզում էր ձեղքը փալաս կամ փայտի կտոր մտցնել: Երեխանները կանգնած էին անշարժ և աչքերը չէին հեռացնում թոկից, որը սպիտակին էր տալիս հովանոցի անկիւնում: Ոչոք բան չէր ասում: կարծես թէ իսկական գազանի էին սպասում: Եւ աչա այդ խորհրդաւոր լուութեան մէջ, յանկարծ կարծես թէ մի բան ճռճռաց և մութը ձեղքից մի ինչ որ մոխրագոյն բան երևաց: Բայց յանկարծ լսուեցաւ մի տրբխկոյ և նետն աղեղից դուրս թըռչելով՝ մխուեցաւ այդ մոխրագոյն բանի մէջ: Երեխանները վախից յետ քաշուեցան, բայց յետոյ ամեն բան իմացան: Այն մոխրագոյն բանը փալասի կտոր էր, որ գտել էր պապին հէնց այնտեղ, խոտերի մէջ: Պապին փալասը վերց-

րել ու փաթաթել էր փայտի ծայրին, որ զազանի գլխին փոքր ինչ նման լինի: Նետը բոլորովին ծակել էր այդ զլուխը և նրան մեխել գետնի մէջ: Երեխաները շատ խնդացին, մինչև անգամ Ստեփանիկը, որ թէպէտ ոչինչ չէր հասկացել, վեր ու վեր էր թռչում, ծափ տալիս ու միւսներից պակաս չէր գոռում: Միայն Օսանիկն էր կարծես թէ դժգոհ. յօնքերը կիտելով, նա կարծես թէ մի տեսակ վախով նայում էր թէ ինչպէս պապին ու Մուկուչը նորից սարքում էին թակարդը: Վերջապէս նա ասաց.

— Խեղձ. նրան խօ շատ կ'ցաւի:

— Տեղն է,— պատասխանեց Մուկուչը: — Թող միւս անգամ ուրիշի հաւերը չ'գողանայ:

Սակայն հովանոցում հետզհետէ միթնում էր և պապին մինչև անգամ սկսեց անհանգիստ լինել, թէ չլինի չ'կարողանայ լուսցերեկով ամեն բան վերջացնել: Երեխաներին մայրիկը շուտով տուն կանչեց, իսկ նա Մուկուչի հետ մնալով՝ շտապով սկսեց թակարդը սարքել:

— Մեր տղայ, այս կողմովս էլ չանցնես, — ասաց նա Մուկուչին ցոյց տալով այն տեղը, որտեղից նրա կարծիքով աղուեսը պիտի մըտնէր: — Օ՛, նա շատ խորամանկն է: Հենց որ մի

կասկածաւոր բան նկատեց — ջարդուած խոտ է այն թէ մարդու հետքերի հոտ, էլ չի մտնիլ: Պէտք է այնպէս ճարպիկ վարուենք, որ այդ խորամանկ փուչին գերազանցենք խորամանկութեան մէջ: Եւ պապին ինքնաբաւական կերպով ժպտում էր, հաւատացած լինելով, որ նա անպատճառ կ'գերազանցի աղուեսին խորամանկութեան մէջ...

Եւ իրաւ՝ ջարդուած խոտը փոցխով ուղղելուց յետոյ՝ պապին մինչև անգամ ինքն էլ դժուարանում էր գտնել այն տեղը, որտեղ թաղցրել էր թակարդը: Մուկուչն անհամբերութեամբ սպասում էր հեռւում մինչև նա կ'վերջացնի:

— Հը, ինչպէս եղաւ, — հարցրեց նա կամացուկ ձայնով ծերուկին, երբոր սա դուրս եկաւ հովանոցից:

— Վերջացրի, — ասաց ծերուկը: — Որ կողմից էլ ուղենայ մտնի, նրա բանը պրծած է:

— Իսկ դու այս կողմն էլ չ'գաս, — աւելացրեց նա՝ վերջին անգամ աչքի անցնելով այգին: — Հա, բակի այն դուռն էլ փակիր, որ ներն այս կողմը չ'գան:

— Կ'փակեմ, — պատասխանեց Մուկուչը հետեւով պապուն բակի միջով:

Փողոցի մէջ նրանք իրարից բաժանուեցան:

— Եզուց վաղ արի, պապի:
— Վաղ կ'զամ, — պատասխանեց պապին
անյայտանալով մթութեան մէջ:

Ե.

Մուկուչը շատ յուզուած էր, նրա քունը չէր
տանում: Մօր կողքին պառկած՝ նա անընդհատ
պատմում էր նրան ինչ որ այդ օրը տեսել և
լսել էր պապուց: Նրա պատմածի մէջ խառ-
նած էր և՝ աղուէսը, և՝ աքիսը, և զանազան
տեսակ թակարդներ—և բոլորն այնպիսի ան-
կարգութեան մէջ, որ ոչինչ հասկանալ չէր կա-
րելի: Բայց Մարիամն աշխատում էր նրան ու-
շաղրութեամբ լսել: Բնատար աչքերով լսում էր,
շարունակ նայում էր նրան, մինչև որ յոգնա-
ծութիւնը յաղթեց և նա աչքերը խփեց: Մու-
կուչը շատ զարմացաւ, երբ մի ինչ որ պատմու-
թեան ժամանակ յանկարծ նկատեց, որ մայրը
քնած է:

— Քնած ես,—հարցրեց նա ցածր ձայնով,
բայց մայրն արդէն չէր պատասխանում: Նա
հառաչեց, պատի կողմ շուռ եկաւ և սկսեց աշ-
խատել որ քնի: Եւ աչա երազի մէջ նա տե-
սաւ նոյն բոլոր բանները, ինչի վրայ առաջ մտա-

ծում էր, բայց մի ուրիշ, օտարոտի դրութեան
մէջ: Աչա օրինակ ճանապարհ—այս այն ճա-
նապարհն է, որի վրայով պիտի անցնի աղուէսը.
Ճանապարհի ծայրին կան դռներ, որոնք տա-
նում են մի մութը զնդան—նա զիտէ, որ այս
այն ճեղքն է, որի միջով աղուէսը հովանոց
պիտի մանի. զնդանի մէջ, դռների մօտ զրուած
է մի երկաթէ մեծ օղակ—այս թակարդն է:
Աղուէսը գալիս է, իսկ նա սրտատրոփ հետեւում
է աղուէսի ամեն մի քայլին: Աղուէսը մօտեցաւ:
Աչա նա զգուշութեամբ բարձրացնում է թաթը
և զնում սև օղակի մէջ տեղը: Եւ յանկարծ—
թրբիսկ, թրբիսկ... Սարսափելի օղակը կարծես
երկու մասի բաժանուեցաւ և քալիաթինի պէս
սեղմեց աղուէսի թաթը:

— Հայ բոնեցէք, բոնեցէք... Եւ Մուկուչն
սկսեց ոտքերը շարժել, երևակայելով թէ վա-
զում է աղուէսի հետեւից: Համարեա ամբողջ
զիշերը նա այսպէս անցկացրեց: Միքանի ան-
գամնա զարթեց և նստելով անկողնի մէջ աշ-
խատում էր նայել դէպի լուսամուտը—թէ
արդեօք դեռ ժամանակը չէ: Բայց լուսամուտի
ետեւ նոյն խաւար զիշերն էր և Մուկուչը նո-
րից պառկում էր և տեսնում նոյն երազները:
Սրեածազից դեռ շատ առաջ նա երազում տե-

սաւ՝ իբր թէ պապին եկել է, լուսամուտը թըխկ-
թըխկացնում է ու մատով կանչում է Մուկու-
չին։ Զարթեց—պապին չկայ, բայց դրսում մի
քիչ լուսացել է և մի ինչ որ տեղ աքաղաղը
ծուղրուղու է կանչում։—Հիմա ժամանակ է,
մտածեց Մուկուչն ու սկսեց կամաց-կամոց շո-
րերը հագնել, որ մայրը չզարթնի։ Ոչոք չլսեց
թէ նա ինչպէս շորերը հագաւ ու զգուշու-
թեամբ դուրս ծլկուեց դռնից։ Միայն երբոր
նա սրահը դուրս եկաւ և սանդուղքը նրա ոտ-
քերի տակ միքիչ ճռճռաց, տան ետևից հաջա-
լով դուրս վագեց շունը, բայց տեսնելով, որ
ծանօթ մարդ է, սուս կացաւ։ Մուկուչն անցաւ
բակի միջով և բացեց պարտէզի դուռը։ Եւ
յանկարծ պարտէզից լսուեցան հաւերի յուսա-
հատական ձայները։—Այս ով է մտել հաւա-
րուն,—մտածեց Մուկուչը։—Աղուէսը,—և յան-
կարծ նա ցնցուեց։

—Հասօ, Ալաբաշ,—կանչեց նա շներին և
վազ տուեց հովանոցի կողմը։ Շները սլացան նրա
ետևից և քիչ մնաց զլորէին նրան։ Մուկուչը
չէր կարողանում նրանց համնել։ Նա հեռուից
տեսաւ թէ ինչպէս շները հովանոցի մօտ յան-
կարծակի շփոթուեցան, իրար անցան, յետոյ մի
կողմ ընկան, ապա միւս կողմ, վազ տուին ցան-

կապատի ուղղութեամբ և յանկարծակի շուռ
եկան բանջարանոցի կողմը։ Մուկուչի առաջ
խոտերի մէջ փայլեց աղուէսի դեղին մէջքը։ Նա
վազ տուեց ցանկանալով կտրել փախչողների
ճանապարհը։

—Բոնեցէք, բոնեցէք, շուտ, շուտ...—գո-
ռում էր նա շունչը կտրած և վազում էր ինչքան
ուժ ունէր։ Իսկ աղուէսը ճանապարհին ոչ մի
ծակ-ծուկ չէր թողնում, որ մէջը չմանէր շնե-
րից թագչելու համար։ Միքանի անգամ շները
հէնց էն է ուզում էին բոնել, մէկէլ տեսնես,
յանկարծ նա չքանում էր, շները չկարողանա-
լով իրանց բոնել, առաջ էին ընկնում, իսկ այդ
ժամանակ աղուէսը—պուկ—ուրիշ կողմն էր վա-
զում։ Կատաղութիւնից Մուկուչի լացը գալիս
էր։ Նա արդէն չէր յիշում թէ ուր կամ որ կողմն
է վազում։ Պարտէզը, բանջարանոցը, ծանօթ-
լճակը—բոլորն երազի պէս նրա աչքի առաջ
անցան և նա մինչև անգամ չէր յիշում թէ որ
կողմը մնացին նրանք։ Նա իր առաջ միայն ե-
րեք բան էր տեսնում. այդ աղուէսն ու շներն
էին։

9.

Պապին զարթեց արևածագին:

—Ի՞նչ է անում հիմա մեր Մուկուչը. ով գիտէ դեռ քնած է,—մտածեց նա դուրս նայելով իր խրճիթից:—Օչօ, արդէն ժամանակ է եղել:

Նրա առաջ ծագում էր տաք ու պայծառ արեգակը. դաշտ ու անտառ զարթել էին արդէն: Արևի ճառագայթները փոքր ինչ յետոյ ընկան և կալուածատիրոջ բակը: Ծառաները ժամանած եկան. նրանցից մեկը Հասօին և Ալաբաշին էր փնտում, որ կապի: Զարթել էր Մարիամը:

—Այս ո՞ր ջչաննամն են կորել Հասօն ու Ալաբաշը, —մտածում էր ծառան, ու կանգնելով բակի մէջ տեղը, շուարած մնացել էր թէ ինչու էլ առաջուան պէս շներն իր առաջ չեն վազում:

—Այս ուր է փախել Մուկուչը, որ չտեսայ, —մտածում էր Մարիամը լուսամուտից դուրս նայելով:

Այդ ժամանակ երեւցաւ պապին:

—Պապի, շներին խօ չես տեսել, —դուսաց ծառան տեսնելով նրան:

—Պապի, Մուկուչին խօ չես տեսել, —հարց-րեց Մարիամը դուրս գալով սենեակից:

—Ոչ քո Մուկուչին եմ տեսել, ոչ քո շնե-րին, —ասաց պապին ծանր ու բարակ ու գգակը վերցրեց:—Պարտէզում կ'լինեն, ուրիշ ո՞րտեղ պիտի լինեն: Հրէն դուռն էլ բաց է, —աւելաց-րեց պապին փայտով ցոյց տալով դուռը:

Նրանք բոլորը գնացին պարտէզի կողմը, այն ինչ Մուկուչն ու շները ունեն ո՞րտեղ էին այդ ժամանակ: Աղուէսը նրանց շատ չարչարեց, մինչև որ ինքն էլ յովնեց: Նա տեսաւ, որ իր հայրենի անտառն էլ չի կարող համել, յանկարծ մի ինչ որ զառիվայր սէզի մէջ անյայտացաւ: Դու մի ասիր, այնտեղ որջ է գտել ու մտել մէջը: Շներն էլ ուզեցան նրա ետևից մտնել, բայց չկարողացան, անցքը փոքր էր: Նրանք սկսան մոմուալ, կնձկընձալ ու թաթերով քչփո-րել սէզը: Մուկուչը բոլորովին կարմրատակել էր. նրա բուզը չորացել էր: Նա մէկ քիսի-քիսի էր անում շներին, մէկ նրանց հետ միասին սկսում էր գետինը փորել և շարունակ չորա կողմ էր նայում թէ չինի աղուէսը մի անտե-սանելի ծակից դուրս պրծնի ու փախչի: Նա գտաւ մի փայտ. փայտն սկսեց որջը խրել, որ դրանով դուրս փախցնի աղուէսին: Բայց փայտը

շատ հեռու չեր գնում, իսկ որջի բերանն այնքան պնդացել էր մի ինչոր ծառի խճճուած արմատներով, որ ոչինչ չեր կարելի անել: Նատ չարչարուեց Մուկուչը, շատ արիւնքրտինք թափեց, բայց ինչ անէր: Բոլորովին յոգնած նա նստեց գետնին ու հիմա միայն գլխի ընկաւ թէ այս ուր է եկել:

—Ա՛խ հիմա, ով գիտէ, ինչեր են անում տանը,—հառաջում էր նա, ու այդ՝ իրան համար անծանօթ տեղի չորս կողմն էր նայում:

Իսկ տանը այդ ժամանակ մեծ իրարանցում էր ընկել: Մարդ չ'կար, որ չ'գիտենար Մուկուչի անյայտանալու մասին և ամեն մէկը նրանցից նրա մասին այլ տեսակ էր պատմում: Այնքան զանազան տեսակ բաներ էին պատմում, որ ոչինչ հասկանալ չեր կարելի: Երեխաները զարթեցին թէ չէ՝ այնպիսի զարմանալի բաներ լսեցին, որ, օրինակ, Ստեփանիկը այդ առաւօտ մայրիկի մօտ ներս վազելով՝ ասաց.

—Գիտե՞ս, մայրիկ, մեր Մուկուչին աղուէսը փախցրել է:

Եւ թէպէտ մնացածները ծիծաղում էին Ստեփանիկի վրայ, բայց իրանը էլ մի առանձին շատ բան չէին հասկանում: Միայն մայրիկը բացատրեց թէ բանն ինչպէս պիտի եղած լիւ-

նէր: Գիշերը, ինչպէս ենթադրում էր պապին, աղուէսը ծանօթ ճանապարհով մտել է հովանոցը, որ հիմա ուրիշ հաւ փախցնի ու ուր զցել է թակարդը: Երեկի թակարդը նրա ոտը կոտրել է ու նա վախից ու ցաւից սկսել է թրպրտալ ու կողկոնձալ. սրանով երեկի զարթեցրել է հաւերին: Նրանք սկսել են գոռալ ու Մուկուչը նրանց ձայնը լսելով՝ իհարկէ չէ համբերել, այլ կանչել է շներին ու վազ տուել հաւաբուն: Աղուէսի բանը բուրդ է եղել. շները մօտենում են, իսկ թակարդը սեղմել է ոտն ու չի բաց թողնում: Ի՞նչ անէր: Եւ աչա վերջին ըոպէին նա կրծել է իր ձզմած ոտն ու արնաթաթախ վազ է տուել երեք ոտների վրայ: Արգեօք հասել են նրան շները ու վերջը ինչ է եղել—այդ յայտնի չէ: Կըգայ Մուկուչն ու ամեն բան կը պատմի:

—Իսկ եթէ Մուկուչը կորցրել է ճանապարհը, —հարցրեց Օսանիկը: —Նա խօ անտառի մէջ կ'մեռնի քաղցածութիւնից: Բացի զրանից այնտեղ գայլեր էլ կան:

—Եթէ ճանապարհը կորցրել է, շները կը գտնեն, —պատասխանեց մայրիկը: —Մարիամն ու պապին էլ արդէն գնացել են նրան փնտուելու: Միք փախենալ չի կորչի:

Սակայն Օսանիկը չէր կարողանում հանդստանալ: Երեխաները կանչում էին նրան խաղալու—նա չէր գնում իբր թէ շոգի պատճառով ու շարունակ ախ էր քաշում: «Ա՛խ, երանի որտեղ է Մուկուչը. ախ, երանի պապին կ'զտնի՞ նրան...» Բայց պապին զուր չէր իր ամբողջ կեանքն անցկացրել անտառում:

Երջակայքը, ամբողջ քսան վերստ տարածութեան վրայ, նա այնպէս գիտէր, ինչպէս իր հինգ մատը. և մի ժամանակ կարող էր այդտեղ եղած բոլոր որջերն ու բները համարել: Զահէլ ժամանակուայ պէս նա հիմա էլ այն ձորի կողմը գնաց, որտեղ առաջ շատ էր տեսնում աղուէմներ: Մուկուչի մայրը լոիկ նրա ետևիցն էր գնում ու երբեմնապէս հառաջում էր ու երեսը խաչակնքում: Պապին երկու տեղ կանգնեց ու սկսեց ականջ դնել, յետոյ փչում էր իր հին սեւացած փողը, մի բոպէ կրկին մնում էր այդպէս կանգնած ու նորից առաջ էր գնում: Վերջապէս ձորին մօտիկ էին, երբ պապին նորից փչեց փողը. փողի ձայնի վրայ լսուեցաւ կարծեա թէ շան հաջոց: Մուկուչի մայրն սկսեց ականջ դնել: Հաջոցը կրկնուեց աւելի մօտ տեղից ու յետոյ լսուեցաւ մարդկային ձայն:

Կարծեա թէ Մարիբէգն է,—վիսթվիսթաց պապին:—Հէնց այդպէս էլ է, այս նրա շներն են:—Մարիբէգն անտառապահ էր և մեր պապու մօտիկ բարեկամը: Ծառերի ետևից հաջելով դուրս վազեց մի զեղին շուն ու սկսուեց պապուն քսմառել: Մուկուչի մայրը վետացած մնացել էր:

«Միթէ Մարիբէգն էլ չի տեսել Մուկուչին», մտածում էր նա և իրան համար աննկատելի կերպով նա արագացրեց քայլերը: Փոքր ինչ յետոյ երեսեցաւ Մարիբէգի մոխրագոյն չուխան: Եւ յանկարծ Մարիամն սկսեց վազել: Պապին միայն հեռուից լսեց ինչպէս թէ մէկը «մայրիկչան» գոռաց, թէ ինչպէս հաջացին շներն ու Մարիբէգն սկսեց հռչուալով ծիծաղել:

— Դէ, հիմա փառք Աստծու, — ասաց պապին ու երեսը խաչակնքեց: Մի բոպէից յետոյ Մուկուչը մօր կողքին նստած ձորի ափին՝ տաքտաք պատմում էր բոլոր պատահածը և աղաչում էր, որ մի Ճար գտնեն աղուէսին որջից հանելու համար:

Ե.

Կէսօրին մօտ անտառից վերադարձաւ միայն Մարիամը: Նա զեռ բանջարանոցին չէր մօտե-

ցել, երբ Օսանիկը տեսաւ նրան հեռուից, նրա առաջ վազեց:

—Մենակ ես գալիս,—գոռում էր նա այնպիսի հեռաւորութիւնից, որ Մարիամն երբէք չէր կարող լսել:

—Մուկուչը, Մուկուչը որտեղ է: Զգտա՞ք նրան, —կրկնում էր Օսանիկը հեռուից:

Բայց Մարիամը կամաց-կամաց էր առաջ գալիս. Օսանիկին ոչինչ չէր պատասխանում, այլ ձեռքերով ինչոր նշաններ էր անում:

—Հանգստացիր, օրիորդ,—ասաց նա երրորդորովին մօտեցաւ Օսանիկին: —Գտանք Մուկուչին: Փառք Աստծու, անտառապահ Սարիբէզն էր տեսել: Ասում է՝ «նստած էր որջի առաջ ու լաց էր լինում»: Մարիբէզը հարցնում է՝ «ինչի ես լալիս»: Թէ՝ «աղուէսը որջը մտաւ ու չի դուրս գալիս»: Այնքան է ծիծաղել Մուկուչի վրայ, այնքան, որ էլ ինչ ասեմ...

—Իսկ չիմա որտեղ են նրանք, —հարցնում էր Օսանիկը:

—Այնտեղ մնացին: Մի ինչ որ որջ են ու զում փորել ու աղուէսի ձագեր հանել միջից: Բայց Մուկուչն ինձ ասաց, որ ես ձեզ բան չասեմ: Ասում է՝ «կը գամ ու ամեն բան ես ինքս կը պատմեմ»: Օսանիկը շատ ուրախացաւ:

Թէպէտ նրա սիրտը շատ էր ուզում իմանալ, թէ անտառում չիմա ինչ է անում, բայց այս բանը գլխաւորը չէր. գլխաւորը նա արդէն իմացաւ և ուրախ-ուրախ վազեց մայրիկի մօտ նրան պատմելու: Այդ օրը Մարիամին հանգիստ չէին տալիս: Մեծից մինչև փոքր, ծառաներից սկսած մինչև գիւղացիք—ամենքը պատմել էին տալիս այն բոլորը, ինչ որ եկել էր Մուկուչի գլխին:

Ճաշից յետոյ ժամի այսպէս 4—5-ին Մուկուչն ինքը վերադարձաւ տուն: Նա շատ քաղցած էր. ուզում էր խեղճը մի բան ուտել ու յետոյ փոքր ինչ հանգստանալ: Նրա բաղդից կալուածատիրոջ երեխաներն այդ ժամանակ ճաշում էին—նրանք միշտ այդպէս ուշ էին ճաշում—և Մուկուչի գալը դեռ չէին իմացել, թէ չէ նրան հանգիստ չէին տալ: Նա հաց կերաւ, կշտացաւ, Հասօնն ու Ալաբաշին էլ կերակրեց ու կապեց: Հէնց այս ժամանակ իմացան երեխաները, որ Մուկուչն եկել է: Օսանիկը ճաշից վերկացաւ թէ՝

—Մայրիկ, ես կարկանդակ չեմ ուզում: թող վեր կենամ:

—Իսկ ես կարկանդակը գրապանս կ'զնեմ, —վրայ բերեց Ստեփանիկը:

Ճար չկար: Մայրիկը բոլորին էլ թոյլ տուեց վեր կենալու:

Իսկ Մուկուչն այդ ժամանակ պարտիզումն էր: Նա սրտատրով տնտղում էր արնաթաթախ թաթը, որը դեռ մնացած էր թակարդում:

—Բարեւ, Մուկուչ, բարեւ,—գոռացին յանկարծ երեխաներն ու արագութեամբ վրայ պրծան Մուկուչի վրայ, այսպէս որ խեղճին քիչ մնաց գլորէին:

—Մուկուչան, շուտով պատմես թէ ինչպէս բռնեցիք աղուէսին:

—Դեռ նստեցէք այստեղ,—ասացնա ցոյց տալով հովանոցի զռան շէմքը ու լուրջ դէմքով սկսեց.

—Այն աղուէսը, որը Զալիկին փախցրեց, ձեռքներիցս փախաւ: Նա երեխ մեր ձեռքն այլ ևս չի ընկնի,—աւելացրեց նա փոքր ինչ կոտրուած:—Հասօն ու Ալաբաշն անփորձ շներ էին, ուրիշները որ լինէին, կ'ըռնէին: Բայց ինչ արած—այն էլ լաւ է, որ իմ Զալիկիս տեղ իր մի ոտից զրկուեց: Այդ բանն էլ չի մոռանալ: Իսկ այն ծակը, որի մէջ նա թագնուեց, քարերով կալնեցինք: Թող սատկի քաղցածութիւնից: Հիմա մենք ուզում ենք նրա ձագերին բռնել: Սարիբէզն ինչ է ասում: «Այսօր, ասում

է, անցնում էի անտառով ու լսեցի աղուէսի ձայներ: Սկսեցի, ասում է, փնտռել ու ինչ տեսայ—միքանի աղուէսի ձուտեր դուրս են եկել որջից, անչանգիստ կերպով դէս ու դէն են վազում ու ինչ որ փնտռում են: Մէկը, ասում է, իր պստլիկ դունչը բարձրացրել է ու հոտոտում է, միայն առաջի թաթերով ցատկում է քռոջի վրայ ու ականջները ցից արած՝ նայում է, կարծես թէ սպասում է մէկին: Երեխ, ասում է, այդ ժամանակ մայրը սովոր է եղել նրանց կերակուր բերել, ու նրանք էլ դուրս են եկել մօր առաջը կտրելու,—իսկ մայրն, ասում է, չկար»: Ո՞րտեղից կ'լինէր,—աւելացրեց իրանից Մուկուչը,—քանի որ նա մեր հաւաքնի թակարդում արնաքամ էր լինում:

—Իսկ դու ինչից զիտես, որ այդ այն աղուէսն է եղել:

—Նա էր, հապա: Սարիբէզն ասում է, որ այդ ժամանակ աղուէսներն իրանց տանն են լինում ու զիշերուանից բերած որսով կերակրում ձագերին: Իսկ այն ձագերը քաղցած են եղել ու մայրն էլ տանը չի եղել, ուրեմն...

—Հապա այն աղուէսն ինչից իր ձագերի մօտ չգնաց: Զէ որ նա ուրիշ որջ մտաւ:

—Ի՞նչ անենք որ: Պապին պատմում է, թէ

Երբոր աղուէսը վիրաւորուած է ու վրայից արիւն է վագում, նա իր ձագերից վախենում է ու նրանց մօտ սկի չի գնալ, որովհետեւ նրանք քաղցած-քաղցած՝ արիւն տեսնելով՝ մօր վրայ կը յարձակուեն:

—Ի՞նչ յիմարներ են.—Նկատեց Ստեփանիկը:

—Լաւ: Զագերին հիմա ո՞նց պիտի բռնէք, —Հարցրեց Օսանիկը:

Ո՞նց: Թակարդ կ' շինենք:

Ու Մուկուչն սկսեց խոտի վրայ ցոյց տալ ու բացարել, թէ ինչպիսի թակարդ պիտի շինեն*):

—Ախ, երանի ես այնտեղ լինէի, —բացականչեց երեխաներից մէկը:

—Ես էլ, ես էլ,—աւելացրին միւսները:

—Գիտես, Մուկուչ: Մենք մայրիկին կը ինողենք, որ մեզ էլ թողնի քեզ հետ անտառը գնալու:

*.) Աղուէսի որջը սովորաբար բաղկացած է մի նեղ մութը սենեակից, որտեղ քնած է լինում ողջ ընտանիքը, և զանազան անցքերից, որոնցից կարելի է զանազան ուղղութեամբ գուրս գալ: Եթէ որսորդներն ուղում են բունել ձագերին, առաջ իմանում են, թէ ինչ ժամանակ նրանց մայրը տանը չի լինում և այդ ժամանակ կալնում են անցքերի բոլոր բերանները: Յետոյ ականջ են դնում ու ձագերի ձայնից իմանում են մօտաւորապէս թէ որտեղ է նրանց սենեակը և այնտեղ վերսից սկսում են փորել: Զագերը, որոնք այդ ժամանակ

—Հիմա արդէն ուշ է, —պատասխանեց Մուկուչը: —Աւելի լաւ է՝ էգուց: Էգուց մենք կ'սկըսենք ձագերին հանել, ու դուք էլ եկեք տեսնելու: Իսկ հիմա պապին ու Սարիբէզը տրեխաներն են կարկատում: Ի՞նչ պիտի տեսնէք:

—Լաւ, —ասացին երեխաները: —Էգուց:

Ը.

Սղուէսի բանը շատ վատ էր: Շներից ազատուելով՝ նա միքանի ժամ շարունակ մեռածի պէս պառկած էր որջում և չէր լսում թէ ինչպէս Սարիբէզն ու Մուկուչը կալնում են որջի բերանը: Նրա բաղդից որջը դատարկ էր և նա կարող էր ուզածի չափ հանգստանալ՝ առանց վախենալու թէ աչա, որտեղից որ է, կ'գայ որջի տէրն ու նրան կ'վոնտի: Երեկոյեան նա զարթնեց և իսկոյն յիշեց իր երեխաներին: Խեղձերը հիմա ով գիտէ քաղցած-ծարաւ սպա-

բաւականին յիմար են լինում, վախեցած՝ թագնուում են զանազան անցքերում, իսկ որսորդները, հասնելով աղուէսի սենեակին, փորում են սենեակի յատակին ու փոսը ծածկում են բարակ ձողերով, տերեներով ու հողով, որ առաջուայ յատակին նման լինի: Սենեակի առաստաղն էլ ծածկում են մամուռով, տաշեղներով ու հողով, որ մութը լինի: Զագերը հետպհետէ դուրս գալով անցքերից ու կամենալով սենեակը մտնել՝ ընկնում են փոսը: Ահա այսպիսի թակարդ էր սարքել Սարիբէզը:

սում են նրան ու լաց են լինում։ Եւ նա ուղեց իսկոյն և եթ դուրս գալ։ Եւ յանկարծ—այս ինչ է։ Ելքը փակուած է։ Անծանօթ, նեղ ու մութ որջումնա կարծես թէ գերեզմանի մէջն է։ Ի՞նչ անի։ Փորձեց գետինը փորել, բայց մի թաթով ի՞նչ պէտք է փորի։ Նրան օգնեց նուրբ հոտառութիւնը։ Նա իմացաւ, որ որջը ետեի կողմից մի ուրիշ մուտք էլ ունի, որ չեն նկատել Սարիբէզն ու Մուկուչը։ Վերջապէս այդ մուտքն էլ գտաւ։ Անտառն արդէն մթնում էր, երբ նա դէս ու դէն նայելով դուրս եկաւ որջից ու զգոյշ կերպով սկսեց մօտենալ իր բնակարանին։ Հանգիստ էր ամեն կողմ, բայց աղուէսի սիրտը թռթռում էր։ Ամեն մի քայլափոխի վրայ մարդկանց նոր հետքեր էին երևում և այս բանը շատ էր նրան անհանգիստ անում։ «Շուտով մի տուն համնեմ, մտածում էր նա, ու ձագուկներիս մի ուրիշ աւելի հեռու տեղ տանեմ»։ Աչա նա արդէն մօտենում է, մի քիչ էլ, ու արդէն այն թփերի ետել, զառիվայրի տակ նրա որջը կ'լինի։

Բայց այս ի՞նչ է։ Որջի վերեից կարծես թէ մէկը տաշեղներ ու հող է ածել։ Իսկ տաշեղների մօտ պառկած են ինչ որ երեք կենդանի։ Միթէ սրանք մարդիկ են։ Եւ աղուէսը

սարսափահար՝ տեղն ու տեղը փէտացած մնաց։ Բայց մարդիկ անշարժ են, կարծես թէ քնած լինեն։ Մի փոքր ինչ սպասելուց յետոյ նա վճռեց կամաց-կամաց մօտենալ ձագերին։ Բայց ձագերը հոտով իմանալով, որ իրանց մայրը մօտ է, այնպիսի մի ձղձղոց բարձրացրին, որ ամեն բան իրար խառնուեց։ Մէկէլ տեսնես՝ շներ հաջեցին (Սարիբէզի շներն էին), պառկած մարդիկ վերկացան ու սկսեցին մանգալ։ Պէտք էր նորից թագնուել ու սպասել, որ ամեն բան նորից հանդարտուի։ Այդ ժամանակ մարդիկ ցախ հաւաքեցին ու խարոյի վառեցին։ Կրակի առաջ տաքանալով՝ շներն սկսեցին նիրհել։ Շուտով քնեցին և երկու հասակաւոր մարդիկը, միայն փոքրը երկար չէր քնում։ Եթէ աղուէն այս առաւաօտ տեսած լինէր այն մարդու դէմքը, որն այնպէս հետեւում էր նրան, իսկոյն կ'ձանաչէր, որ այդ չքնողը Մուկուչն է։ Հենց որ մի քիչ մթնել էր՝ Մուկուչի սիրտը չէր համբերել ու իսկոյն նորից անտառ էր վագել։ Միևնոյն էր՝ նրա քունը չէր տանի տանը։ Հիմա նա Սարիբէզի ու պապու հետ աղուէսի բնին պահպանութիւն էր անում։ Կրանք քնել էին, իսկ նա ծալապապատիկ նստած՝ կրակին էր նայում։ Խարոյին այնքան էլ լաւ չէր վառւում. ծառերն ու թփերը

նրա շուրջը կարմիել էին և կարծես թէ ցնցւում էին, չէնց որ բոցը շարժւում էր կամ աւելի պայծառ էր վառւում: Ուղիղ կրակի ետևն երեսում էր որջի գլխաւոր մուտքը, որը հիմա ծածկած էր քարերով ու չոր ճիւղերով: Սովորաբար այստեղովն էր աղուէսը դուրս գալիս ու ներս մտնում: Այս նեղ մուտքի բերանում տեղ-տեղ կպած էր աղուէսի բուրդը:

Ա՛խ, ինչ լաւ տեղ էր այս տեղն աղուէսի համար: Ի՞նչքան ազատ էր ապրում նա այս-տեղ չէնց երէկ: Ամեն մի քարի կտոր յիշեց-նում էր նրան, թէ ինչպէս ուրախ ու անչոզ խաղում էին այստեղ նրա ձագուկները, ցատ-կրտում էին կամ վազ էին տալիս այն մկների ետևից, որոնց բերում էր հոգատար մայրը, որ իր զաւակները որս անել սովորեն: Ի՞նչպէս ա-զատ, արձակ կերպով նրանք տաքանում էին արեգակի տակ... Իսկ հիմա նրանց սիրելի որջը մի բանտ է դարձել, որտեղ պիտի մեռնեն նրա թանկագին ձագուկները:

Տխուր-տրտում աղուէսը գնաց և մտաւ մի կիսով չափ փթած և գետին տապալուած ծառի բնի տակ և այնտեղ սկսեց սպասել, թէ վերջն ինչ կլինի: Կոծած թաթը սարսափելի կերպով ցաւում էր, բայց նա երբեմնապէս էր

միայն լիզում այդ թաթը, որովհետեւ վիշտն ու ահը աւելի խիստ էին ցաւից: Նա աչք չէր հեռացնում խարոյկից, մարդկանցից, որջից, որտեղ հիմա լուռ էին և երևի արդէն քնել էին նրա խեղճ պստլիկ, դեղին աղուէսիկները: Նրանք այնքան յիմար էին, որ չէին իմանում թէ էգուց առաւօտ ինչ է սպասում նրանց. միայն մայրական սիրող սիրտն էր, որ հալու-մաշ էր լինում նրանց համար:

Մուկուչը դեռ էլի չէր պառկել: Նրա քունը թէպէտ շատ էր տանում, բայց իրան պահում էր ու կամ օրօրուում էր կողքի վրա կամ գլուխն առաջ ու հետ թափահարում: Բայց աղուէսին նա թւում էր ոչ թէ գիւղական մի պարզա-միտ տղայ, այլ իբրև մի դաժան հրէշ, որ չա-րախնդութեամբ պահպանում էր նրա ձագերին, որ յետոյ սպանի կամ նահատակի նրանց:

թ.

Այդ գիշերը շատ երկար տևեց աղուէսի համար: Վերջապէս ծէզն սկսեց բացուել: Հո-վիկն անցաւ անտառի միջով դողդողացին տե-րեւները. տեղ-տեղ սկսեցին երգել թուչունները: Այս այն սովորական ժամանակն էր, երբ ա-

զուէսը գիշերուան որսն իր ձագուկների համար էր բերում։ Սյաօր էլ սովորականին պէս նրանք զարթեցան, փորձեցին որջից դուրս վազել մօր առաջը կտրելու, բայց որջի բոլոր բերանները փակուած էին։ Զորս կողմը մուժն էր, ողը ծանր... նրանք քաղցած են... ուր է մայրը։ Ուր է սլայծառ և ուրախ արեգակը։ Ուր է անտառի արձակ ու անուշաբոյր ողը... Եւ նրանք սկսեցին մղկտալի ձայնով լալ ու կնձկրնձալ։ Հասաւ և աղուէսի ականջն իր սիրելի զաւակների լացի ձայնը։ Նա ամբողջ մարմնով դողդողաց, ուզեց առաջ մղուել, բայց... ոչ։ Կըսպանեն մարդիկը, կ'պատառոտեն շները. գուցէ նա էլի պէտք է դալի իր ձագերին, գուցէ մի կերպով կ'փրկի նրանց։ Եւ նա իրան պահեց, աւելի խորը մտաւ փթած քնի տակ և մեռածի պէս անշարժ պառկեց։ Բայց ժամանակն անցնում էր—երկար էր թւում այդ ժամանակը—և թշուառ մօր սիրտն աւելի ու աւելի էր ցաւում։

Արեն արդէն բարձրացել էր, երբ Սարիբէգն ասաց.

— Դէ՞չ, ժամանակ է։ Զագերին հանենք։ Ես նրանց ձայներից նկատում եմ, որ նրանք արդէն փոսումն են։

Մուկուչը ցնցուեց ուրախութիւնից, բայց յետոյ մտաբերեց.

— Ախր, հիմա հանել չի կարելի,—ասաց նա։ — Պարոնի որդիքը պիտի տեսնելու գան։ Գնամ նրանց իմաց անեմ։

— Դէ, շուտով գնա, — պատասխանեց պապին։ — Բայց որ այդպէս է, ուրեմն ձագերին էլ սպանել չի լինի, որովհետև երեխանները կուզենան հետները խաղալ։ Ուրեմն չ'մոռանաս, տանից մի հաստ տոպրակ կամ ամուր քթոց բեր։

— Լաւ. — ասաց Մուկուչն ու անհետացաւ անտառի կանաչում, իսկ Սարիբէգն ու պապին նորից տնտղեցին որջի բերանները, պառկեցին արեգակի տակ ու կպցրին չիրուխները։

Աղուէսը չէր հասկանում, թէ ինչ էին խօսում մարդիկը, բայց նրա համար պարզ էր, որ նրանք վատ բան են ուզում անել։ Նա կուրծքն ամուր սեղմել էր գետնին. նրա սիրտը սաստիկ թռթռում էր ու թռթռոցին ձայն էր տալիս գետինը։

Իսկ պապին ու Սարիբէգը ծանր ու բարակ զրոյց էին անում, առանց մինչեւ անգամ մոքովն անցկացնելու, թէ ինչքան սարսափելի կերպով տանջում էր մի մայրական սիրտ իրանցից մի փոքր հեռու։

Յանկարծ անտառի միջում լսուեցան մանկան ուրախ աղաղակներ և շուտով երեւեցան երեխաները, մայրիկը և ապա Մուկուչը, որը շալակած ունէր փալամներով փաթաթած մի ահագին քմոց: Նրանք ուրախ-ուրախ բարեւցին պապուն ու Սարիբէգին և շարունակ նայում էին որջի գլխին թափած ցախին:

—Կոտորենք, թէ կենդանի հանենք, —հարցրեց ցածր ձայնով Սարիբէգը մայրիկին:

Բայց Օսանիկը լսեց այս բանը: Նա փաթաթուեցաւ մօրն արտասուելով:

—Մայրիկջան, ասա չսպանեն: Մենք մեզ հետ կտանենք... Մենք նրանց կ'կերակրենք, կ'պահպանենք ու նրանք էլ հաւեր չեն գողանալ: Մայրիկջան, բարի մայրիկ, ասա չսպանեն, —ինդրում էր Օսանիկն արտասուելով:

Մնացած երեխաներն էլ մօր չորս կողմը հաւաքուեցին ու ինդրում էին, որ թոյլ չտայ ձագերին սպանելու:

—Եթէ այս ձագերին բակում պահես, աղուեմն էլ չի հեռանալ այստեղից, —փնթփնթաց պապին: —Այն ժամանակ էլ նրա ձեռքից պրծնել չի կարելի:

Սարիբէգի մեղքն եկաւ երեխաները:

—Ե՛ս, երեք ոտով, այն էլ սիրտը կոտրածը

ի՞նչ պէտք է անի, —ասաց նա: —Կ'սկսի բակի շուրջը պտուտ պտուտ գալ ու այն ժամանակ հրացանով նրան սպանել դժուար չի լինի: Իսկ ձագերն ուրախ գազանիկներ են. նրանք մեր պստիկ պարոնների հետ կ'խաղան: Եւ եթէ նրանց հետ մարդ լսւ վարուի, նրանց մինչեւ անգամ շների պէս կարելի է վարժեցնել:

—Տեսնում ես, մայրիկջան, ինչ է ասում Սարիբէգը: Մայրիկջան, բարի մայրիկ, մեզ նուիրիր ձագուկները:

—Զեր ձեռքից խօ պրծնել չի լինի: Դէ թող ձերը լինի:

Երեխաներն ուրախութիւնից ծափ տուեցին, իսկ ձագուկները նրանց աղաղակից վախեցած՝ ձայները կտրեցին:

—Դէ, Մուկուչ, հանիր, —դարձաւ —պապին Մուկուչին:

Յանկարծ ամեն բան լոեց: Երեխաները չնչերը կտրած՝ նայում էին, թէ ինչպէս Մուկուչը քմոցը Սարիբէգին յանձնելով՝ ծնկների վրայ կանգնեց, զգոյշ կերպով մի կողմ ածեց ցախը, նայեց փոսի մէջը, ապա ձեռքից մէջը կոխեց և յանկարծակի ոտի վրա կանգնեց: Նրա ձեռքին թրպրտում էր մի դեղին թաւամազ աղուեսիկ, որը շարժում էր իր չորս ոսներն ու պոչը:

—Ա՛յս ի՞նչ գեղեց...—բացականչեցին երեխաները, բայց դեռ խօսքը բերանին՝ լուեցին:

Աղուէսի ձագը ճարպիկ կերպով ձկեց զլուխը և այնպէս սաստիկ կծեց Մուկուչի ձեռքը, որ նա ցաւից ու վախից վայր գցեց ձագին, որը մի ակնթարթում կծկուեց, խփեց ետևի ոտները գետնին, ցատկեց ու անհետացաւ թաւուտ անտառում:

Աղուէսը քիչ մնաց ուրախութիւնից հաջէր, բայց խկոյն յիշեց, որ որջի մէջ դեռ ուրիշ երկու ձագ էլ ունի. դրա համար նա կրկին տխուր տրտում իր տեղը նստեց:

Երեխաները, չերն ու Սարիբէգն խկոյն ձագի ետևից ընկան: Բայց անտառն այնքան խիտ էր և ձագն այնքան փոքր, որ շուտով ամենքը հասկացան, որ նրա բռնելն անկարելի է: Այդ ժամանակ որջի մօտից լսուեցաւ պապու աղաղակը:

—Այ, տո անիծուած, այ, տո աւաղակի ծնունդ, այ, տո... թուչ:

Երբ ամենքն աղուէսի ձագի ետևիցն ընկան, որջի մօտ մնաց միայն պապին, որ միւսներին ձեռքից չթողնի: Նա էլ Մուկուչի պէս չոգեց ու ձեռքը կոխեց փոսը:

Աղուէսի արիւնը զլուխն ընկաւ... Այս ի՞նչ

է. մէկի ետևից ընկած հալածում են, միւսին էլ ուզում են հանել, որ տանջեն...

Կ'փրկեմ,—վճռեց նա:—Իսկ եթէ ինձ սպանեն... թող սպանեն: Գոնէ զաւակներիս չետ միասին կ'մեռնեմ:

Հանդարտ, առանց մինչեւ անգամ շնչելու նա պապուն մօտ սողաց, մինչդեռ վերջինս ձեռքը փոսումն ունէր, բայց չէնց որ սա ոտի կանգնեց աղուէսի ձագուկին պոչից բռնած, աղուէսը վրայ թռաւ բռնեց իր որդու վզից և արագաբար սլացաւ անտառի խորքը:

Պապին այնպէս շշկուեց, որ մինչեւ անգամ մոռացաւ աղուէսի ետևից ընկնել. նա միայն զարմացած ձեռքերն էր թափէթափ տալիս, ախ ու վախ քաշում ու հայհոյում: Նսերը չեռու էին, անտառի միւս կողմն ու դեռ աշխատում էին գտնել առաջին ձագին, իսկ երեխաներն ու Սարիբէգը մօտենում էին որջին խօսելով ու միսիթարելով Մուկուչին, որը ջգրից, ամօթից ու ձեռքի ցաւից լաց էր լինում:

Երբ նրանք պապուն մօտեցան, երկրորդ ձագն արդէն չեռու էր:

—Հը, ի՞նչ է պատահել, պապի,—գոռաց հեռուից Սարիբէգը:

—Ի՞նչ պիտի լինի: Ախր, խլեց է, չէնց ձեռքիցս խլեց:

— Ո՞վ իսկեց, ո՞վ:
 — Աղուէսը, էն փուչը, սատանի ծնունդը:
 — Ախր, ի՞նչ իսկեց, ասա է:
 — Իր ձագը, իր ձագը: Հէնց էն է ես պոչից... մէկ էլ տեսնես աղուէսը... Օ՛չ նրա, օ՛չ...—պապին այնպէս էր շշկուել ու բարկացել, որ նրա դէմքին նայողն իսկոյն կ'ծիծաղէր: Տիկինն ու Սարիբէզն ակամայից ծիծաղեցին:

— Երկուսդ էլ ցոյց տուիք ձեր շնորքը,— նկատեց Սարիբէզը:—Պապի, դու շատ էլ մի նեղանար: Աղուէսների հետ գործ ունեցողը ամեն բան ի նկատի պիտի ունենայ. խօ գիտես, նրանք շատ անգամ փորձանքի ժամանակ առիւծից էլ աւելի քաջ են դառնում, իսկ խորամանկութեան մէջ նրանց ո՞վ կ'համնի:

— Այդ խօ այդպէս է, — համաձայնում էր պապին.— բայց ախր ի՞նչպէս արաւ. օ՛չ, նրա ծնունդը... տեսա՞բ:

— Թողէք հիմա ես փորձեմ բաղդս, — ասաց Սարիբէզը:—Պապի, դու քիթոցը բռնիր, իսկ դուք, օրիորդ, հէնց որ ձագուկը մէջը զցեմ, իսկոյն ծածկեցէք փալասով:

Այս անգամ բանը յաջող գնաց: Զագը թրպրտում էր ու կողկոնձում, բայց քիթոցն ամուր կերպով չորս կողմից փալասով փաթաթեցին

ու Սարիբէզի շալակը տուին: Ամբողջ ճանապարհը աղուէսի մասին էին խօսում: Մուկուչի բարկութիւնը դեռ չէր անցել:

— Սպասիր, անպիտան,—սպառնում էր նա աղուէսին:—Եթէ երկրորդ ոտք էլ չ'կտրեմ թակարդով, ես ի՞նչ տղայ եմ: Սպասիր, էլ գողութիւն չես անի ու մարդկանց վրայ էլ չես յարձակուի:

— Զուր ես յոյսդ թակարդի վրայ դրել— պատասխանեց Սարիբէզը:—Հիմա այդ աղուէսը սովորեց: Էլ քո թակարդը չի ընկնի: Նրան հիմա հրացանով սպանելուց աւելի ուրիշ ճարչկայ:

— Ոչ, իմ կարծիքով այդ աղուէսը շատ լաւ աղուէս է, — ասաց Օսանիկը:— Նա քաջ է ու թշուառ: Նրան սպանելը մեղք է:

— Բոլորովին էլ մեղք չէ, — վնթվնթաց Մուկուչը:

Մայրը, նկատելով, որ աղուէսի համար եւ րեխաների մէջ թունդ վէճ է սկսում, խօսքը փոխեց:

— Հիմա մենք այս ձագը ո՞րտեղ պիտի պահենք, — ասաց նա:— Քիթոցում չի կարելի, իսկ մեր սենեակներում՝ աւելի ես:

— Ես գիտեմ, որտեղ կարելի է պահել—

գոռաց Մուկուչը:—**Զ**արդախում պղնձէ մի մեծ վանդակ կայ: Մայրս պատմում էր, որ ձեր պապը մէջը մի ինչ որ թութակ անունով թուչուն է պահելիս եղել: Քանի որ ձագը փոքր է, նրա համար նեղ չի լինի վանդակը, իսկ երբ որ նա կ'մեծանայ ու փոքր էլ կ'ընտելանայ, նրան կարելի է ամբարում կամ մի այլ տեղ պահել:

— Լաւ խելք է,—համաձայնեց Սարիբէգը:— Թութակների վանդակներն ամուր են լինում: Նրանց մինչև անգամ մեծ ազուէսը չի կարող քանդել:

Տանը ամենից առաջ աշխատեցին ձագին կերակրել: Բայց նա ոչ մի բանին չէր մօտենում, չէր ուտում ու ոչոքին էլ մօտ չէր թողնում: Իսկ երբ մենակ էր մնում, կողկոնձում էր ցաւալի ձայնով, դողդողում էր ու դէս ու դէս նայում:

Զարդախից ցած բերին վանդակը, սրբեցին ու դրեցին պարտիզում մի ծառի տակ: Սարիբէգը ձագին քթոցից հանեց ու վանդակի մէջ նստացրեց: **Վ**անդակում մի մութ անկիւն չկար, որտեղ խեղճ ձագուկը կարողանար կուչ գալ, իսկ մանուկները շրջապատելով վանդակը՝ շարունակում էին իրը թէ սիրտ տալ ձագուկին, փաղաքշել ու կերակրել նրան: Բայց նա վախե-

նում էր նրանցից, մի ծայրից միւս ծայրն էր ընկնում, գողդողում էր ու երբեմնապէս մինչև անգամ ատամները բանալով՝ սպառնում:

Վերջապէս վանդակին մօտեցաւ և մայրիկը: Նա փոքր ինչ ժամանակ նայում էր ձագին և յետոյ ասաց:

— Նա ձեղ չի հասկանում ու վախենում է ձեղանից և շարունակ կ'վախենայ, եթէ դուք նրան այդպէս անհանգիստ կանէք: Աւելի լաւ է թող ձեղանից մէկն ու մէկը մնայ այստեղ ու աշխատի ընտելացնել նրան, թէ չէ նա քաղցից կ'մեռնի:

Երեխանները յետ քաշուեցան, բայց ձագուկն այնքան էր նրանց դուք գալիս, որ հէնցոր մայրը չեռացաւ թէ չէ, նրանք նորից շրջապատեցին վանդակը:

Սկսեց մի՛նել: Երեխաններին տարան քնելու, իսկ ձագուկը մնաց մենակ քաղցած ու ծարաւ, դողդողալով իր նեղ ու չոր վանդակում:

Ժ.

Մանուկներն այդ օրը շատ էին յոպնել: Նրանք քաղցր ու խորը քուն էին մտել: Զէր տամում միայն Օսանիկի քունը: Մայրիկի նա

քաղցից կ'մեռնի» խօսքերը նրա մտքից չեն հեռանում: Նրա մեղքն էր գալիս փոքրիկ որբացած ձագուկը: Նա մտաբերում էր թէ ինչպէս անհամբերութեամբ սպասում էր ճաշին, երբ փոքր ինչ երկար զբօսանքից վերադառնում էր տուն, կամ երբ խոհարար փոքր ինչ ուշացնում էր ճաշը: Նա միքանի րոպէ, շատ-շատ միժամ, չէր կարողանում համբերել, իսկ թշուառ ձագուկը... Ոչ, հարկաւոր է, անպատճառ հարկաւոր է նրան կերակրել և այնպէս, որ ոչոք չտեսնի, որ ոչոք չվախեցնի ձագուկին: Օսանիկը ինքն էլ չնկատեց, թէ ինչպէս նա կամաց-կամաց վերկացաւ, շորերը հազար, մտաւ խոհանոց, վերցրեց ընթրիքից մնացած միքանի գետնախնձոր, ձու, մսի կտոր և զգուշութեամբ բաց արաւ խոհանոցի բակը տանող դուռը:

Յուլիսեան խաղաղ ու տաք զիշեր էր. հազարաւոր աստղեր փայլում էին երկնքում: Օսանիկը կանգ առաւ ու սկսեց ականջ զնել: Մի ինչ որ հեռու տեղում կանչում էին աքաղաղները. թեթև կերպով ցնցւում էին ծառերի տերեները: Ձագուկի ձայնը չէր լսում:

«Երեխ քնել է, մտածեց Օսանիկը, կամաց-կամաց կ'մօտենամ ու երբ նա կ'զարթի, կերակուրն առաջը կ'զնեմ ու կ'զնամ: Նա այս կը-

տեսնի, ել չի վախենալ ինձանից ու կարելի է մինչև անդամ ինձ սիրի: Յանկարծ լսուեցաւ ձագուկի ձայնը. այդ ձայնը այսօրուայ կողկոնցին չտեսած՝ լսում էր թէ ինչպէս ճռճռում են վանդակի ձողերը: «Միթէ ձագուկն ուզում է ձողերը կոտրել» մտածեց Օսանիկն ու արագացրեց քայլերը: Բայց չէնց որ նա մօտեցաւ Ճեմելիքին, որտեղից երևում էր վանդակը, տեղն ու տեղը սառած մնաց:


Ձագուկը մենակ չէր: Նրա թշուառ երեք ոտնանի մայրը նստած էր վանդակի առաջ և ատամներով ու թաթերով աշխատում էր բաց անել դուռը կամ կոտրել վանդակի պղնձէ հաստ ձողերից մէկը: Վանդակի մօտ, գետնի վրայ ընկած էր մի վիզը կրծած հաւ: Թշուառ մայրն իր գերի զաւակի համար կերակուր էր բերել: Իսկ ձագուկն իր վիշտը մոռացած՝ երբեմն խազում էր մօր հետ, երբեմն աշխատում էր հաւը վանդակը ներս քաշել: Նա երեխ շատ էր քաղցած:

«Ախ, կրկին հաւ է. գողացել: Ինչի՞ է եկել նա այստեղ: Սարիբեկը խօ ասաց, որ հրացանով կ'սպանի... Իսկ եթէ նա այսօր եկել է, նշանակում է ամեն օր կ'գայ. մինչև որ կը-սպանուի...»

Օսանիկը ձագի համար վերցրած կերակուրը
դէն զցեց ու վանդակի մօտ վազեց։ Աղուէսը
վախեցաւ, յետ ցատկեց ու թագնուեց թփե-
րում։

Օսանիկը բաց արեց վանդակը ու դուռը
բաց թողեց։ Բայց ձագուկն այնքան յիմար էր,
որ ոչինչ չ'հասկացաւ ու վանդակից չէր դուրս
դալիս։ Օսանիկը թագնուեց մի թփի յետև և
այնտեղից սկսեց նայել։ Յանկարծ երևեցաւ
աղուէսն ու ցատկեց վանդակի ներսը։ Նա ա-
տամներով բռնեց իր յիմար ձագուկի վզից,
վախվիսելով դէս ու դէն նայեց ու յանկարծակի
փախաւ։

«Շուտով փախիր, խեղճ աղուէս։ Հիմա էլ
քեզ չեն սպանի և ուրախ կապրես քո սիրուն
ձագուկների հետ միասին» մտածեց Օսանիկը
նայելով նրա ետևից ու կամաց քայլերով վերա-
դարձաւ տուն։



19	Նամուս. վէպ. գրեց Շիրվանզադէ	1 —
20	Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմ. տիեզերական. Յ-ըդ տպագ	2 —
21	Թիգլիսեցւոց մտաւոր կեանքը, գ. Տէր Աղէքսանդրեանի	1 50	
	Նոյնը բնափր թղթի վայ	2 —	
22	Ղեռնդ պատմագիր	2 —	
23	Սրբազան պատմութիւն հին ուխտի. Աա- հակ քահանայ Սահակեանի	— 30	
24	Նոյնը ուսուցիչների համար	1 75	
25	Սոկրատէս, թարգ. օր. Թ. Ստեփոյեան	— 10	
26	Պատմութիւն Հայոց. Պալասանեանի	1 50	
27	Ուղեցոյց գործնական չերամապահու- թեան. Կ. Մելիք-Շահնազարեանցի	— 40	
28	Ժամանակագրութ. Հայոց Յ. Դարդելի	1 25	
29	Վարդ-Ռէսլի, Սպիրի. թարգ. Ի. Յ.	— 10	
30	Նալ և Դամայեանդի. Ֆ. Շմիդտի թարգ. Յ. Լալայեանցի	— 20	
31	Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը Կոմս Լ. Տոլստոյ. թարգ. Մ. Ա.	— 7	
32	Հաւատարիմ Սավիտրին. Վայլտնէր, թարգ. Փ. Վարդանեան	— 10	
33	Իինհարդ և Գերտըուգ. Հենրիխ Պեստա- լոցցի. թարգմանութիւն	— 25	
34	Յաւելուած ի գիրս պատմութեան Ստե- փաննոսի Տարօնեցւոյ Ասողիկ կոչեցելոյ. Նորայր Բիւզանդացի	— 20	
35	Նաւի փոքրաւորը. Մ. Ռողենհայնի. թարգմ. Յ. Լալայեան	— 15	
36	Ուռենց Յովսէփ, Ե. Սպիրի. թարգ. Ի. Յ. .	— 15	
37	Մեծապատիւ Մուրացկ. Յ. Պարոնեանի	— 40	
38	Ազգային ջոջեր. Յ. Պարոնեանի	1 —	
39	Բը-ա-բա, Է. Օժէշկոյի	— 15	
40	Շնիկ. Կուլիկովայի	— 5	
41	Շլեգըինի երեք զրոյցներ	— 10	
42	Տարասկոնցի Տարատրէնը	— 40	
43	Օրէանի կոյսը, Օստրոգորսկու	—	
44	Արտարատսկու ինքնակենսագրութիւնը	—	



NL0387649



«Ազգային գրադարան

45	Գաղափարական քահանայ,	Պօտապենիո —	75		
46	Ընտանիքի յոյսը	— 10			
47	Հուսոսի ձեռատետրը Յ.	Պարոնեանի	1 —		
48	Քիմիա Ռուկոյի,	թարգմ. Ա.	Մելիք-Ալլահ-		
	վերդեան		— 40		
49	Նշեղինի Երեք վէպիկ, թ.	Մ.	Ղազարեանի — 15		
50	Սասմայ ծռեր,	Գարեգին սարկ	— 50		
51	Զաւախիքի բուրմունք,	Ե.	Լալայեանցի . — 25		
52	Դաստիարակութիւն	Սպենսերի,	թարգմ.		
	Մ. Ղազարեանցի		1 —		
53	Մըւուան.	Ի.	Շմիդտ թ. Ա.	Քալանթար — 20	
54	Խան-Միբան			— 20	
55	Տարաս-Բուլբա			— 40	
56	Փշանքներ,	Գ.	սարկ. Յովսեփեան.	— 50	
57	Երկու քոյր,	Ղ.	Աղայեանց	— 25	
58	Դրախտի ընտանիք,	Կրեց	Խրիմեան		
	Հայրիկ		— 60		
59	Սիրաք և Սամուէլ,	Գրեց	Խրիմեան Հայրիկ — 50		
60	Փորձանքների բժշկարան		— 20	
61	Մակրէթ, Շեքսպիրի		— 50		
62	Պատառեօր Ս.	Բալաղեանի և Ա.	Քալանթարի — 20		
63	Խօլերա,	թժ.	Վ.	Խրծունու	— 5
64	Խարազի տղայ.	Ս.	Քամալեանի	— 40	
65	Հանրամատչելի բնախօսութիւն	Վ.	Լուն- կելիչի.	թարգմ.	
	Գիւլնազարեանի		1 —		
66	Փարաւոնի աղջիկը,	Էքերսի	թարգմ.		
	Գ.	Շահըրուգաղեանի	— 80		
67	Խուն-խոր,	Յ.	Ղազարեանցի	— 60	
68	Ելգուշա վէպ.	թարգմ.	Տ. Փիրումեանցի.	— 45	
69	Չորրորդ մոգ.	Վ.ան-Դէյկի	— 5		
70	Դրախտի ընտանիք	Խրիմ.	Հայրիկի	— 50	
71	Սիրաք և Սամուէլ		— 50	
72	Զըոյցներ հողի մասին	Ս.	Բալաղեանի . — 15		
73	Աստղաբաշխութիւն,	Ֆլամարիոնի.	թարգ.		
	Տ. Յովհաննիսեան		— 1 —		
74	Մանուկների հոգատարութիւնը	Ե.	Ա. Պօ- կրօվսկիյ,	թարգ.	
		թժ.	Թ.	Զաքարեան.	— 20